

ԳՅՈՒՄՐԻ - ԿԱՐՍ
(Զուգահեռներ)

Ինչքան առիթ եմ ունեցել Կարս գնալու, նախորդ օրն անպայման այցելել եմ Գյումրի: Թեպետ Գյումրին ես գիտեմ, ինչպես ասում են, բաց ափի պես, սակայն իմ այդ այցելությունն անհրաժեշտ է եղել՝ նորից ու նորից նայել հին շենքերը, դրանց կառուցվածքը, նախշերն ու քիվերը, կամարներն ու խոյակները: Նայել ու համեմատել Կարսում պահպանված հայկական փոստի հետ: Դա կրկնվել է մի քանի անգամ՝ դեպի Արևմտյան Նայասարան իմ բոլոր ուղևորությունների ընթացքում: Քայլել եմ Կարսի փողոցներով, ու ինձ թվացել է, թե Գյումրիի Արովյան փողոցում եմ: Շենքերի ճիշտ նմանությունը փեսնելով թախձալի մի փրամադրություն եմ ապրել, թե Կարսից փարագիր գյումրեցին ինչպես է ջանացել չկտրվել իր արմատներից՝ նույնափայ փուն կառուցել Գյումրիում, փան ճակարկն էլ նույն նախշերով ու քիվերով զարդարել, կապել նույն կամարը և դրել նույնանման դուռ, որն Աստու փված ամեն օր բացելիս իրեն թվա, թե Կարսի իր փան դուռն է բացում: Սա արմատի և ճյուղի ճամփեն պահելու նրանց հույսն է:

Մեր հնությունների հետ կապված ամեն ինչի մեջ խորհուրդ դնելու լրագրողիս սովորությամբ Գյումրիում Կարսի փոստ էի փնտրում, Կարսում՝ գյումրվա փոստ: Կարսում հայկական փոստի մոտ հիշեցի արևելագետ, դիվանագետ Ռիչյան Աուգլեյի մի վկայությունը (1812թ.) «Մի կարգ շենքերում նկատելի էին գեղեցիկ ու լավ փաշած քարեր, շաք փոստ եզերված էին որմնադրվագներով... Շինարարական ընդհանուր ոճն այս քաղաքը դարձնում էր ավելի նման եվրոպական հին քաղաքներին...»:

Եթե օփարեկրացին ժամանակ ու ցանկություն ունենար խորանալու Կարսի պարսկության մեջ, հավանաբար պիտի վկայեր, որ իր գովերգած այդ շենքերը հայ վարպետների ձեռքի գործ են՝ կառուցված այնքան կարարյալ, որ մինչ օրս էլ դրանցից շարերն ընդգրկված են Կարսի պարսկաշակության հուշարձանների շարքը, դրանց լուսանկարները զարդարում են քաղաքապետարանի պաշտոնյաների աշխատասենյակները: Իրենք՝ Կարսի պաշտոնյաները, ընդունում են այդ փաստը և չեն էլ խուսափում երբեմն գովերգել հայ շինարարի վարպետությունը:

Կարսում շաք կան հայկական ամրակուռ, նախշազարդ ճակարամասերով շքեղ առանձնափոստեր, որոնք առանձնակի շուք են փալիս նորակառույց քաղաքին: Դրանց մեծ մասը բնակեցված չէ՝ «Նայի անիծյալ փուն է» զարմանալի պարսկաշակությամբ: Այդ փոստի մոտ մեր ավտոբուսը մի քանի բոպեով կանգնում էր, և փեսախցիկ ու լուսանկարչական սարք ունեցողներն անմիջապես իջնում, փարբեր կողմերից նկարում ու նկարահանում էին: Մենք նկարում էինք շենքերը, իսկ մեզ նկարահանում էին Կարսի հեռուստատեսության խմբագիր-օպերատորը և մարզային ու քաղաքային թերթերի լուսանկարիչ-թղթակիցները: Մենք հիանում ու զարմանում էինք գեղեցիկ նախշերով ու քիվերով, հրաշալի փորագրություններով, իսկ մեզ նկարահանող փեղացիներն էլ զարմանում էին, թե մենք ի՞նչ ենք փնտրում այդ «լքված փոստի» վրա: Նրանց հասու չէին գյումրեցի Ֆելիքս Գրիգորյանի ապրումները, որ Աստու փված ամեն օր իր քաղաքում ճիշտ նման շենքերի կողքով է անցնում ու հիմա ապշել է այս նույնությունից, ոչ էլ ռեժիսոր Ալբերտ Մկրտչյանի հիացմունքն ու թաքուն փայփայանքը, թե՛ «Ֆիլմ նկարելու ի՞նչ հիանալի վայր է»: Շենքերի ճիշտ նմանության փաստից այդ երկու գյումրեցիների վրա թախձալի մի փրամադրություն իջավ: Գուցե այդ պահին նրանց պարկերանում էին 1830-ին Կարսից Ալեքսանդրոպոլ գաղթած իրենց նախնի՛ք, ովքեր իրենց արմատները չոռանալու համար նույնափայ փոստ են կառուցել՝ զարդարելով նույն նախշերով ու քիվերով:

– Իսկ քաղաքապետարանի շենքը «անիծված չէ՛»,-առանց խայթոցի հարցրի խմբագիր-օպերատոր Պեղիբին:

– Այնպեղ չեն բնակվում, այնպեղ աշխատում են,- կոշտ պատասխանեց Պեղիրը և, երևի զգալով իր պահվածքի կոշտությունը, հաշտվողի փոնով վրա բերեց,- «անիծյալ» ասածը բնակիչներից ոմանց հորինած բառն է, դա պետական քաղաքականություն չէ:

Նրա այս վերջին խոսքերի վրա մենք արդեն հասել էինք քաղաքապետարան, ուր մեր խմբի հետ հանդիպում էր նշանակված, թեպետ օրը կիրակի էր՝ մարտի 13-ը: Երկհարկանի այդ փան պատին, անշուշտ հուշաքար չէր փակցված, թե այս փունն ով է կառուցել, այսպեղ ով է ապրել: Սա, փեսնես, Չարենցի հերոսներից որի՞ փունն է եղել՝ պրիստավի՞նը, Մազուրի Նամոյի՞նը... Այս փունը աշխարհի որ անկյունում էլ դնես, կզգացվի, որ հայի փուն է:

ՀԱՅԵՐԻ ՏՆԵՐԸ ԿԱՐՍՈՒՄ

Նաիրյան այդ փոքրիկ քաղաքում կանգնած են հիմա քարե միհարկանի, երկհարկանի և նույնիսկ երեքհարկանի շինություններ՝ տներ ու խանութներ:
Ե. ՉԱՐԵՆՑ



Կարս

Նայելով Կարսի այս շենքերին, որոնք պահպանվում են, որոնց մեծամասնությունը չի բնակեցվում, սակայն և չի քանդվում ու չի ավերվում, զարմանալիորեն ուրախանում եմ »Հայի անիծյալ տուն է« գրվածի համար: Իմ այս զգացողությունը զուգահեռվում է Լեոյի՝ Անիի ավերակների շուրջ մտորումներից մեկին՝ »...Ավերակները սարսափ, սնոտի երկյուղ էին պատճառում. մնացել էր ավանդություն, որ գեղեցիկ քաղաքը մի հոգևորականի անեծքով է այդ վիճակին հասել: Աստծու բարկությունն էր այդտեղ թափվել. իսկ ուր կա այդպիսի նախապաշարմունք, այնտեղ մույթ ամբողջը մի փրկարար երկյուղի մեջ է: Փրկարար այն կողմից, որ ավերակները նոր ավերողներ չունենան: Նրանք մնացին մարդկանցից հեռու, միստիկական մշուշով պատված և պահվեցին այդ հանգամանքի շնորհիվ: Նրանք մոռացության էին դատապարտված, իսկ մոռացությունն այն պատն էր, որի հետևում նրանք պատասպարվեցին երկար ժամանակ«:



Գյումրի

Կարսի հայկական շատ տներ այդ «տարբերակով» պահպանվեցին: Դրանց վրա գրված «վաճառվում է» բառերին ոչ ոք ուշադրություն չի դարձնում, և տախտակապատ լուսամուտները, կախյալ կողպեքով փակ դռները կարոտ են մարդկային ձեռքերի, կարոտ են վերաբերմունքի: Նորօրյա կարսաբնակներն այդ տներին այլ աչքով են նայում, մենք՝ ուխտավորներս, բոլորովին այլ հայացք ունենք դրանց վրա: Մեզ համար դրանք նրբամանի հայաշատ Կարսի լուռ վկաներն են՝ ցավ ու տրտմություն առաջացնող:

– Ղահվեճի Սեթոյի խանութը որտե՞ր փնտրենք, Պեղիր:

Իմ հարցումը Ֆելիքսի դարդերը խառնեց, որ մի ամբողջ օր Կարսում սուրճ էր փնտրել ու չէր գտել.

– Չէ՛ մի,- ձայնեց Ֆելիքսը,- էդ խեղճ տղան կարո՞ղ է Տելեֆոն Սեթոյի խանութի տեղն էլ գիտի, որի վրա գրված է՝ «Չայ, Ղայֆվե, ճաշարան-Սեթրակ Ֆալիան»:

– «Խեղճ տղան» Չարենց չէր կարդացել, և մեր կատակի իմաստը փորձեց մեր թարգմանիչ Հարությունից ստանալ:

– Տղաները սուրճ են ուզում, իսկական սև սուրճ,- լուրջ-լուրջ բացատրեց թարգմանիչ Հարությունը:

– Բաղաքապետարանում թե՛յ կտան,- ասաց Պեղիրը:

Տարիներ առաջ Լենինականի Աբովյան փողոցում տեսաֆիլմի համար կադրեր էինք նկարահանում: Ուստա Գրիշի ֆայտոնով անցնում էինք փողոցով, և քաղաքի մշակույթի բաժնի վարիչ Հասմիկ Կիրակոսյանը, ով ուղեկցում էր մեզ, ասաց. «Ինձ թվում է, թե՛ հիմա այս տներից մեկից կարսեցու տարագով մի կին է դուրս գալու»:

Կարսեցի օպերատոր Պեղիրին ուզում էի պատմել այդ մասին, բայց նա կանխեց ինձ իր տարօրինակ հարցով.

– Չներոնք այս ի՞նչ են կպել պատերին, ինչու՞ չեն շտապում ներս մտնել:



Դեռ 2005 թվականին էր, և ուխտավորներից շատերն առաջին անգամ էին լինում Կարսում, և այդ տունը, ուր տնդավորված էր քաղաքապետարանը, ուխտավորների համար նախ և առաջ հայկական տուն էր, որի մոտ անպայման ուզում էին նկարվել: Պեղիրին սա ինչպե՞ս բացատրեն:

Այս հանդիպումը կազմակերպող Մարտին Թադևոսյանը՝ ինքն էլ գյումրեցի, ինքն էլ նույն այդ զգացումի և հուշերի գերին, հորդորեց արարողակարգը պահպանել. «Քաղաքապետարանում մեր գրույցի միակ թեման Չարենցն է ու նրա հայրական տան պատմությունը, ձեր զգացումները զսպեք մինչև հանդիպման ավարտը»:

Փոխքաղաքապետը հյուր ընդունողի բացառիկ շնորհներ դրսևորեց՝ նախաարահում շոայլ հաճոյախոսություններով մեկ առ մեկ բարևեց, հետո ցույց տվեց իր աշխատասենյակի պատերին փակցված լուսանկարները՝ բերդը, Վարդանի կամուրջը, Առաքելոց եկեղեցին՝ գմբեթին կիսալուսինը, կայարանի շենքը և նախշագարդ դիմապատերով հայկական մի քանի տներ: Ապա նրկար բացատրեց, որ դրանք իրենց հպարտությունն են և համարվում են քաղաքի պատմամշակութային արժեքներ: Հետո անցավ Հայաստանի հետ սահմանի բացման խնդրին, որի դրական լուծմանը խանգարում են... սփյուռքահայերը: Մեր հայացքներում զարմանք նկատելով, փոխքաղաքապետը շտապեց «բացատրել».

– Եթե իրենք այնտեղից չմիջամտեն, մենք՝ սահմանակից երկու ժողովուրդներս, իրար ավելի լավ կհասկանանք և աշխույժ առևտուր կանենք: Ասաց ու խրատի մասը եզրափակեց հետևյալ խոսքերով,- եթե դուք նրանց քիչ լսեք, մենք ձեզ հետ վաղուց բացված սահման կունենայինք:

– Այս մի միտքը պետակա՞նք քաղաքականություն է,-շշուկով հարցրի այտը տեսալսցիկին հենած Պեղիրին:

– Այս մեկը՝ հա,- կարճ պատասխանեց նա:

Օրեր անց, արդեն Երևանում, ես «Հուրիյնթ» թերթի էլեկտրոնային էջում կարդացի Թուրքիայի վարչապետ Էրդողանի տված հարցազրույցը, ուր մասնավորապես ասվում էր. «...Թուրքիայի նկատմամբ հայաստանաբնակ հայերը լավ վերաբերմունք ունեն, իսկ սփյուռքի հայերը սրում են հարաբերությունները և փորձում միգրացիոն երևույթը հիմնավորել ցեղասպանությամբ»:

Կարսի քաղաքապետարանում շարունակվող գրույցը բացվող սահմանի հեռանկարն էր, Կարսի ամբողջ նահանգով մեկ ստորագրահավաքը, որ «Այո» ասողների ձայնը Թուրքիայի իշխանավորներին պիտի համոզեր, թե նահանգի տնտեսության շահերը պահանջում են Հայաստանի հետ անմիջական կապերի հաստատման անհրաժեշտությունը: Հավատայինք, թե ոչ, այս էր ներկայացվում մեզ, և, որպես բարի դրացիական հարաբերության ամրապնդման քայլ, փոխքաղաքապետն այդ թեմայից սահուն անցում կատարեց Չարենցի հայրական տունն իրենց հսկողության տակ վերցնելու և հայերիս օգնելու նրա առք ու վաճառքի հարցում:

– Մենք առանձնակի ուշադրություն կդարձնենք այդ տանը, հնարավորություն կտանք վերանորոգել, կառուցել քանդված երկրորդ հարկը և այդ տունը կգրանցենք քաղաքի պատմամշակութային արժեքների շարքը:



Երբ քաղաքապետարանից դուրս եկանք, օպերատոր Պեդիրի զարմանքը նորից բռնեց, որ մեր խմբից յուրաքանչյուրն ուզում էր այդ շենքի մոտ նկարվել:

– Արի մենք էլ նկարվենք,- ասաց նա,- երբ արդեն բացված սահմանով հաճախակի գաք, այդ նկարից մի օրինակ էլ ինձ բերեք:

– Տպագրած հոդվածի հետ կբերեմ,- խոստացա նրան:

Նյուրանոց վերադարձին մենք դարձյալ մի պտույտ կատարեցինք Կարսով, և յուրաքանչյուրիս նույն զգացումն էր պատել՝ կարծես մենք Գյումրիի փողոցներով էինք անցնում՝ այնքան նման շենքեր կային:



Շարունակելի